ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «10» 12 2025 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 63 Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 2-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուների կողմից ներկայացված հայտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածով (այսուհետ՝ Հավելված) սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը.

1) Հայտատու ֆիզիկական անձ Ռուստամ Գրիգորի Գրիգորյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ռուստամ Գրիգորի Գրիգորյանն իր

հիմնական գործունեությունը իրականացրել է ռիելթորական գործունեության ոլորտում, իսկ գնահատման գործունեություն ծավալում է սկսած 2023 թվականի սեպտեմբերի 22-ից, ուստի՝ չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտներում: Միևնույն ժամանակ, Ռուստամ Գրիգորի Գրիգորյանի կողմից իրականացված գնահատման գործունեության ամբողջ ժամանակահատվածը չի բավարարում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նվազագույն մասնագիտական փորձառության ժամանակահատվածին, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերով չեն հիմնավորվում գնահատման գործունեության կամ Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության այլ ոլորտներում իրականացրած առնվազն երկու ծրագրերի առկայությունը,

2) Հայտատու ֆիզիկական անձ Աննա Գագիկի Աղաբեկյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Աննա Գագիկի Աղաբեկյանն իր գործունեությունը իրականացրել է ռիելթորական գործունեության ոլորտում, ուստի չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտներում,

3) Հայտատու ֆիզիկական անձ Վերոնիկա Սմբատի Սարգսյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Վերոնիկա Սմբատի Սարգսյանն իր գործունեությունը իրականացրել է ռիելթորական գործունեության ոլորտում, ուստի չի համապատասխանում հավելվածի Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտներում,

4) Հայտատու ֆիզիկական անձ Հասմիկ Սամվելի Վարդանյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հասմիկ Սամվելի Վարդանյանն իր գործունեությունը իրականացրել է ռիելթորական գործունեության ոլորտում, ուստի չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտներում,

5) Հայտատու ֆիզիկական անձ Վաչե Հովհաննեսի Թոքմաջյանի հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Վաչե Հովհաննեսի Թոքմաջյանի կողմից Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում իրականացված ծրագրերի վերաբերյալ տվյալներ առկա չեն, այն է՝ մասնակցություն ոլորտին առնչվող ծրագրերին,

փորձագիտական աշխատանքներին, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերում, հանձնաժողովների աշխատանքներում, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ,

6) Հայտատու ֆիզիկական անձ Էդգար Ժիրայրի Պետրոսյանի հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Էդգար Ժիրայրի Պետրոսյանի կողմից Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում իրականացված ծրագրերի վերաբերյալ տվյալներ առկա չեն, այն է՝ մասնակցություն ոլորտին առնչվող ծրագրերին, փորձագիտական աշխատանքներին, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերում, հանձնաժողովների աշխատանքներում, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ,

7) Հայտատու իրավաբանական անձ Հայաստանի գործատուների հանրապետական միության հայտն այն հիմնավորմամբ, որ բավարար չափով չի հիմնավորվում Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով պահանջված Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում վերջին հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտում առնվազն երեք տարվա գործունեության փորձը և այդ ժամանակահատվածում իրականացված առնվազն երկու ծրագրի առկայությունը,

8) Հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի հաշվապահների Ասոցիացիա» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ բավարար չափով չի հիմնավորվում Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով պահանջված Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում վերջին հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտում առնվազն երեք տարվա գործունեության փորձը և այդ ժամանակահատվածում իրականացված առնվազն երկու ծրագրի առկայությունը,

9) Հայտատու ֆիզիկական անձ Տարոն Արամի Բեժանյանի հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի հիմնավորվում առնվազն երկու տարվա

մասնագիտական փորձառության, ինչպես նաև Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջված աշխատանքների կատարման փաստը, այն է՝ մասնակցություն ոլորտին առնչվող ծրագրերին, փորձագիտական աշխատանքներին, Կոմիտեի ոլորտներին վերաբերող աշխատանքային խմբերին, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ,

10) Հայտատու ֆիզիկական անձ Կարեն Թադևոսի Բաբայանի իր հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի հիմնավորում Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջված աշխատանքների կատարման փաստը, այն է՝ մասնակցություն ոլորտին առնչվող ծրագրերին, փորձագիտական աշխատանքներին, Կոմիտեի ոլորտներին վերաբերող աշխատանքային խմբերին, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ,

11) Հայտատու ֆիզիկական անձ Կիմ Լեոնիդի Վահանյանի հայտն այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Կիմ Լեոնիդի Վահանյանի կողմից Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրերի վերաբերյալ բավարար տվյալներ առկա չեն, այն է՝ մասնակցություն ոլորտին առնչվող ծրագրերին, փորձագիտական աշխատանքներին, ներգրավվածություն Կոմիտեի կողմից ձևավորված աշխատանքային խմբերում, հանձնաժողովների աշխատանքներում, ոլորտին առնչվող հարցերով համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ,

12) Հայտատու իրավաբանական անձ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ այն բավարար չափով չի հիմնավորում Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով պահանջված Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում վերջին հինգ տարվա

ընթացքում տվյալ ոլորտում առնվազն երեք տարվա գործունեության փորձը և այդ ժամանակահատվածում իրականացված առնվազն երկու ծրագրի առկայությունը:

12/10/2025

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393